

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 54/3

11 դեկտեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.11.2012թ-ի նիստում քննության է առնվել «Երևաննախագիծ» ՓԲԸ 05.11.2012թ. թիվ 40/01-410 դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 24.10.2012թ. թիվ 1002195 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 02.04.2012թ. թիվ 1002195 հանձնարարագրի «Երևաննախագիծ» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 24.10.2012թ-ին կազմվել է թիվ 1002195 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 9.933.979 դրամ:

Ընկերության բողոքը վերաբերվում է ստուգման ակտով շահութահարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Ստուգման ակտի 1-ի կետով մասնավորապես արձանագրվել է.

ներկայացված փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ընկերության և «Նոր Երևան» ՍՊԸ-ի միջև կնքված 28.04.2010թ. թիվ ՃԳՄ-30/10 պայմանագրի համաձայն, պատվիրվել է մշակելու «Երևանի Կենտրոնի Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի, Մ.Մաշտոց պողոտայի և Ե.Կողբացու փողոցի միջանկյալ տարածքում առևտրահասարակական համալիրի» աշխատանքային նախագիծ: Այդ աշխատանքային նախագծերի մեջ ներառված է եղել նաև ինժեներա-երկրաբանական հետազոտությունների և նախագծային աշխատանքներ: Ըստ 27.05.2010թ-ի թիվ 167 հաշիվ-ապրանքագրի, ընկերությունը պատվիրատուին է հանձնել Երևանի Կենտրոնի Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի, Մ.Մաշտոցի պողոտայի և Ե.Կողբացու փողոցի միջանկյալ տարածքում առևտրահասարակական համալիրի նախագծային աշխատանքները, ընդհանուր գումարով՝ 41.000.000 դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 6.833.332 դրամ: «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն 27.05.2010թ. թիվ 10/06 պայմանագրի համաձայն «Գեոտարածքնախագիծ» ՍՊԸ-ին պատվիրել է կատարելու նշված տարածքի երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքները: Այդ աշխատանքները կատարվել են 06.07.2010թ. թիվ 20 հաշիվ-ապրանքագրով, արժեքով՝ 19.500.000 դրամ, ԱԱՀ՝ 20%՝ 3.900.000 դրամ, ընդամենը՝ 23.400.000 դրամ, որն ըստ էության, կապ չունի 27.05.2010թ-ի թիվ 167 հաշիվ-ապրանքագրով հանձնված աշխատանքների հետ: Նշված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքներն ընդգրկված են ՀՏ ներկայացված 2010թ. շահութահարկի հաշվարկի ծախսերի մեջ, քանի որ նշված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքներն ավելի շուտ են իրականացվել և հանձնվել պատվիրատուին, քան այդ նախագծի աշխատանքների մեջ ընդգրկված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքները:

Այսպիսով, ընկերությունը խախտել է «Շահութահարկի մասին» «Օրենքի 10 հոդվածի «բ» կետի պահանջները, մասնավորապես՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրանց ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, անհրաժեշտ են համարվում անմիջականորեն և բացառապես ապրանքների արտադրության ծառայությունների մատուցման, շուկայի առաջխաղացման և /կամ/ ապրանքների /ծառայությունների/ իրացման, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը: Վերոնշյալ խախտման հետևանքով 2010թ. հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 19.500.000 դրամի չափով:

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» «Օրենքի 33-րդ հոդվածի, «Հարկերի մասին» «Օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 7.645.000 դրամ:

«Երևաննախագիծ» ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

Գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները՝

1/ «Նոր Երևան» ՍՊԸ-ի՝ որպես պատվիրատու և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի միջև 28.04.2010թ-ին կնքվել է թիվ ՃԳՄ-30/10 պայմանագիր, ըստ որի «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին պատվիրվել է մշակել «Երևանի կենտրոնի գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի Մ.Մաշտոցի պողոտայի և Ե.Կողբացու փողոցի միջանկյալ տարածքում առևտրահասարակական համալիրի» աշխատանքային նախագիծ: Պայմանագրին կից կազմվել է օրացուցային գրաֆիկ, ըստ որի աշխատանքների կատարման

ժամկետները նշված են 28.04.2010թ-ից մինչև 25.10.2010թ., իսկ պայմանագրին կից կազմված վճարման ժամանակացույցով նախագծային աշխատանքները բաշխվել են երկու մասի՝

1-ին փուլ՝ մայիս-սեպտեմբեր ամիսներ՝ ելակետային տվյալների և տեխնիկական պայմանների ապահովում: Համաձայն լրացուցիչ առաջադրանքային պայմանների նախագծային լուծումների ճշտում: Երկրաբանական հետազոտություն:

2-րդ փուլ՝ մայիս-հոկտեմբեր ամիսներ՝ նախագծային աշխատանքներ:

2/ 28.04.2010թ-ի թիվ ՇԳԸ-30/10 պայմանագրով նախատեսված օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային աշխատանքների կոնստրուկտորական համակարգի ընտրման, կոնստրուկցիաների հաշվարկման և մշակման համար անհրաժեշտություն է առաջացել կատարել կառուցյի տեղադրման շինարարական հրապարակի ինժեներաերկրաբանական հետազոտություն, նյութերի կամերալ մշակում և եզրակացություն իր գրաֆիկական նյութերով: Այդ աշխատանքների կատարման համար <Երևաննախագիծ> ՓԲԸ-ն <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ի հետ կնքել է ենթակապալի երկու պայմանագիր:

Նշված պայմանագրերով աշխատանքները <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ի կողմից իրականացվել են 2010թ-ի մայիս-հունիս ամիսներին, իսկ աշխատանքների վերջնական ընդունման-հանձնման ակտերը կազմվել են՝ առաջինը 01.07.2010թ-ին, գումարով 23.4 մլն. դրամ, երկրորդը՝ 15.07.2010թ-ին, գումարով 7.9 մլն. դրամ:

3/ Ի կատարումն 28.04.2010թ-ի թիվ ՇԳԸ-30/10 պայմանագրով նախատեսված աշխատանքների, հենց նույն ժամանակահատվածում մայիս-հունիս ամիսների ընթացքում <Երևաննախագիծ> ՓԲԸ-ն որպես գլխավոր կապալառու <Նոր Երևան> ՍՊԸ-ի հետ կազմել է որոշակի աշխատանքների ծավալների հանձնման-ընդունման ակտեր՝

ա/ 27.05.2010թ-ին կազմվել է հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրությունը, որը հանդիսանում է միջանկյալ արձանագրություն և իր մեջ ներառում է աշխատանքների կատարման որոշակի փուլ, սակայն ամենևին չի նշանակում, որ պայմանագրի վճարման ժամանակացույցի 1-ին փուլով նախատեսված երկրաբանական հետազոտության աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

բ/ 30.07.2010թ-ին կազմվել է հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրությունը, որը նույնպես հանդիսանում է միջանկյալ արձանագրություն և իր մեջ ներառում է աշխատանքների կատարման մի որոշակի փուլ:

գ/ 28.12.2010թ-ին կազմվել է հանձնման-ընդունման թիվ 3 արձանագրությունը, որը նույնպես հանդիսանում է միջանկյալ արձանագրություն և իր մեջ ներառում է աշխատանքների կատարման մի որոշակի փուլ:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների ամբողջական ավարտից հետո որպես վերջնական արդյունք նախատեսված է կազմել վերջնական հանձնման-ընդունման արձանագրություն:

4/ հարկային մարմինը ստուգման ակտում նշելով, որ Ընկերության կողմից հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 19.500.000 դրամի չափով, քանի որ նշված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքներն ավելի շուտ են իրականացվել և հանձնվել պատվիրատուին, քան այդ նախագծի աշխատանքների մեջ ընդգրկված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքները, չի հիմնավորում և չի ապացուցում: Չի հիմնավորված նաև <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի կողմից <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի խախտման հանգամանքը, քանի որ ՀՏ-ն չի հիմնավորում, թե կոնկրետ այդ 19.500.000 դրամի ծախսերը ոչ անհրաժեշտ են եղել, թե չհիմնավորված:

5/ 16.05.2012թ-ի թիվ 1300502 հանձնարարագրով <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ում իրականացված հանդիպակաց ստուգման արդյունքում 08.06.2012թ-ին կազմվել է թիվ 1300502 տեղեկանքը, որով ընկերությունում որևէ խախտումներ չեն արձանագրվել:

6/ չընդունելով 19.500.000 դրամի Ընկերության կողմից 2010թ-ի շահութահարկի հաշվարկում ընդգրկված ծախսը հարկային մարմինը համապատասխանաբար <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ում չի արձանագրել ավելի շահույթ: Այսինքն, եթե պակասեցվում է շահութահարկի գծով Ընկերության կատարված ծախսը, ինչից ենթադրվում է, որ հարկային մարմինը Ընկերության իրականացված գործարքը չի ընդունում, ապա ստացվում է, որ նույն գումարի չափով, ենթակա է վերահաշվարկման, պակասեցման նաև <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ում հարկվող շահույթի և համապատասխանաբար շահութահարկի գումարի պակասեցում, ինչից հետևում է, որ հարկային մարմինը 19.500.000 դրամի մասով իրականացրել է շահութահարկի կրկնակի հարկում՝ երկու ընկերությունում էլ 19.500.000 դրամը դիտել է շահույթ և հարկել:

յ

Ակտում արձանագրված և վիճահարույց երկրաբանական աշխատանքների իրականացումն ընդգրկվել էր վճարման ժամանակացույցի 1-ին փուլում, որը նախատեսված էր իրականացնել մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում: Այսինքն, ՀՏ-ի այն պատճառաբանությունը, որ նշված

աշխատանքներն ավելի շուտ էին իրականացվել քան <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ի կողմից իրականացված և հանձնման-ընդունման ակտով 01.07.2010թ-ին հանձնված աշխատանքները անհիմն է, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց, երկրաբանական հետազոտական աշխատանքները իրականացվում էին փուլ առ փուլ նախագծային աշխատանքներին զուգահեռ և ընդգրկում են 2010թ-ի մայիս-սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածը: Նշվածից հետևում է, որ <Երևաննախագիծ> ՓԲԸ-ն <Նոր Երևան> ՍՊԸ-ի պատվերով իրականացրել է որոշակի աշխատանքներ, որի վերաբերյալ կազմվել է 27.05.2010թ-ի թիվ 1 հանձնման-ընդունման ակտը՝ 41.000.000 դրամի չափով և դուրս է գրվել թիվ 167 հաշիվ-ապրանքագիրը: Որից հետո որոշ աշխատանքների, մասնավորապես՝ երկրաբանական հետազոտական աշխատանքների իրականացումը ենթակապալի պայմանագրով <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի կողմից հանձնարարվել էր <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ին և գլխավոր կապալառու <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի վերջինիս կողմից հանձնվել էր 01.07.2010թ-ին, որից հետո <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի կողմից վճարման ժամանակացույցին համապատասխան հունիս ամսվա աշխատանքների մի որոշ մասը հանձնվել էր <Նոր Երևան> ՍՊԸ-ին, որի վերաբերյալ կազմվել էր 30.07.2010թ-ի թիվ 2 հանձնման-ընդունման ակտը, որի մեջ ներառված էին նաև <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ի կողմից իրականացված աշխատանքները: Ավելին՝ 28.04.2010թ-ի թիվ ՃԳՄ-30/10 պայմանագրով նախատեսված տարածքում աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ էր եղել համալիրի ինժեներաերկրաբանական հետազոտության իրականացում, այն է հորատման աշխատանքների, գրունտների և գրունտային ջրերի նմուշարկում, գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություն, որոնց իրականացման համար ընկերությունը չի ունեցել համապատասխան մասնագետ, հորատող տեխնիկա և լաբորատորիա: Այդ իսկ պատճառով երկրաբանահետազոտական աշխատանքները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու համար այդ աշխատանքների իրականացմանը ներգրավել էր <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ն, որի հետ կնքվել էր 27.05.2010թ-ի թիվ 10/06 պայմանագիրը՝ գումարով 23.4 մլն դրամ ներառյալ ԱԱՀ: Պայմանագրով նախատեսված աշխատանքները <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ն կատարել էր 27.05.2010թ-ից մինչև 01.07.2010թ. ժամանակահատվածում և լրիվ ծավալով 01.07.2010թ-ին հանձնման-ընդունման ակտով հանձնել էր <Երևաննախագիծ> ՓԲԸ-ին: Նշվածից հետևում է, որ վիճահարույց 19.500.000 դրամի ծախսերը միանշանակ անհրաժեշտ էին 28.04.2010թ-ի թիվ ՃԳՄ-30/10 պայմանագրով <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունները պատշաճ և որակին համապատասխան իրականացնելու համար:

2/ <Ճահողթահարկի մասին> ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների, <Ռեզիդենտների կողմից շահողթահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին> հրահանգի 5.1 կետի դրույթներից հետևում է, որ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով:

Ընկերությունը գտնում է, որ կատարված 19.500.000 դրամի ծախսերը անհրաժեշտ էր 28.04.2010թ-ի թիվ ՃԳՄ-30/10 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար:

Խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, 55-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ստուգման ակտի 1-ին կետը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Երևաննախագիծ> ՓԲԸ ներկայացուցիչների և ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

<Երևաննախագիծ> ՓԲԸ և <Նոր Երևան> ՍՊԸ-ի միջև 28.04.2010թ-ին կնքված թիվ ՃԳՄ-30/10 պայմանագրի (այսուհետ նաև Պայմանագիր) համաձայն, ընկերությանը պատվիրվել է մշակել <Երևանի Կենտրոնի Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի, Մ.Մաշտոց պողոտայի և Ե.Կողբացու փողոցի միջանկյալ տարածքում առևտրահասարակական համալիրի> աշխատանքային նախագիծ, որում ներառված է եղել նաև ինժեներա-երկրաբանական հետազոտությունների և նախագծային աշխատանքները:

27.05.2010թ-ի թիվ 167 հաշիվ-ապրանքագրի համաձայն, ընկերությունը կատարել է և պատվիրատուին հանձնել Երևանի Կենտրոնի Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի, Մ.Մաշտոցի պողոտայի և Ե.Կողբացու փողոցի միջանկյալ տարածքում առևտրահասարակական համալիրի ելակետային տվյալների հավաքագրման, երկրաբանական հետազոտության և նախագծային աշխատանքները, ընդհանուր գումարով՝ 41.000.000 դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 6.833.333 դրամ:

<Երևաննախագիծ> ՓԲԸ և <Նոր Երևան> ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի 3.3 կետի համաձայն. <Կատարողի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային

գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից>:

Ի կատարումն Պայմանագրի 3.3 կետի <Երևաննախագիծ> ՓԲԸ և <Նոր Երևան> ՍՊԸ-ի միջև 27.05.2010թ-ին ստորագրվել է հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրությունը, որի համաձայն <Երևաննախագիծ> ՓԲԸ-ն 20.03.2010թ-ից մինչև 27.05.2010թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է Երևան, Կենտրոն, Գլխավոր պողոտայի՝ Սարյան փողոցի, Մ.Մաշտոց պողոտայի և Ե.Կողբացու փողոցի միջանկյալ տարածքում առևտրահասարակական համալիրի ելակետային տվյալների հավաքագրման, երկրաբանական հետազոտության և նախագծային աշխատանքները, ընդհանուր գումարով՝ 41.000.000 դրամ:

<Երևաննախագիծ> ՓԲԸ-ի և <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ի միջև 27.05.2010թ-ին կնքված թիվ 10/06 պայմանագրի համաձայն, ընկերությունը <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ին պատվիրել է կատարել նշված տարածքի երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքները: Այդ աշխատանքները կատարվել են 06.07.2010թ-ին, որի վերաբերյալ կազմվել է թիվ 20 հաշիվ-ապրանքագիրը, արժեքով՝ 19.500.000 դրամ, ԱԱՀ 20%՝ 3.900.000 դրամ, ընդամենը՝ 23.400.000 դրամ:

Քննարկվող դեպքում <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ին պատվիրված և վերջինիս կողմից կատարված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքները, ըստ էության, կապ չունեն արդեն իսկ <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի կողմից կատարված և 27.05.2010թ-ի թիվ 167 հաշիվ-ապրանքագրով պատվիրատուին՝ <Նոր Երևան> ՍՊԸ-ին հանձնված աշխատանքների հետ: Նշված երկրաբանա-հետազոտական նախագծային աշխատանքներն ընդգրկված են ընկերության կողմից ՀՏ ներկայացված 2010թ. շահութահարկի հաշվարկի ծախսերի կազմում, որով խախտվել են <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի <բ> կետի պահանջները:

Հարկ է նշել նաև, որ <Երևաննախագիծ> ՓԲԸ-ի հետ իրականացված գործարքների իսկությունը պարզելու նպատակով <Նոր Երևան> և <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ներում իրակացվել են հանդիպակաց ստուգումներ, որոնց արդյունքներով ըստ էության հիմնավորվել է ստուգման ակտի 1-ին կետում արձանագրված խախտումն ընկերության կողմից կատարված լինելու հանգամանքը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

<Երևաննախագիծ> ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ-ի 2012 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1002195 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել հիմնավոր, իսկ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագիծը՝ ոչ հիմնավոր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ներկայացնող գանգատարկման խորհրդի անդամների կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն, կատարված հետաքննության արդյունքում պարզվել է, որ <Գեոտարածքնախագիծ> ՍՊԸ-ն <Երևաննախագիծ> ՓԲԸ-ին մատուցել է երկրաբանա-հետազոտական նախագծային ծառայություններ:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով սույն գործի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդի եզրակացությունը, գտնում է, որ <Երևաննախագիծ> ՓԲԸ 05.11.2012թ. թիվ 40/01-410 դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ղ ը մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 24.10.2012թ. թիվ 1002195 ստուգման ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ

